



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material



44

ԳՈՐԾ ԳՐԱԴԱՐԱՆ — թիվ 1

ՄԵԿ ՄԻԼԻՈՆ ՍԴԵՐԼԻՒՆՈՅ

ՊԱՆՔՏՈՄԱԸ

---

Հեղինակ

ՄԱՐԳ ԴՈՒԵՆ

— 0 —

Թարգմանիչ

ԺԻՐԱՅՐ

---

ԱՂԲԱՎԵԴՐԻԱ

1904

ՄԵԿ ՄԻԼԻՈՆ ՄԴԵՐԼԻՆՆՈՑ

# ՊԱՆՔՏՈՄՍԸ

Հեղինակ

ՄԱՐԴԻ ԴՈՒՅՆ

— 0 —

Թարգմանիչ

ԺԻՐԱՅՐ

ԳՐԱՑՈՒՆ ՀԱՅԵԼԻ

1904

Աշխարհագրության

6636 թ 39

ՄԵԿ ՄԻԼԻԹԻ, ՈՊԱԽՆՈՅ  
ՊԱՆՔՏՈՄՍԸ

Թերք 27 տարու էի, կ'ապրեի Սան—Ֆրանչիս-  
կոյի մէջ, և կը ծառայէի հանքային արժէթուղ-  
թերու վրայ գործ ընող պանքեռի մը քով։

Աշխարհի վրա չո՛ւ զլուխ մը ըլլալով, միայն իմ  
հարպիկութեանս ու բարի համբաւիս վրայ կրնայի  
յայս դնել։ Այս բաց հանքային արժէթուղթերը  
կրնային որ մը հարստութեան ճամբուն վրայ, դնել  
զիս։ Հեռանկարը կը բաւեր ինձի։ Ամեն շաբաթ,  
Սոկակարանին գոցուելէն ետքը, այսինքն կես օրին,  
ոզոտ էի, և այդ ազատութենէն օգուտ կը բա-  
զէի իմ առագաստաւոր նաւակով։ պայտա կատա-  
րելու ծովածոցին մէջ։

Օր մը շատ հեռուները գոցի և ծովին բացը  
բշուեցար Գիշերը կոխեց և փրկութեան ամեն յայս  
կորուսած էի, երբ երկկայմ նաւ մը, որ Լոնտոն  
կերթար, աղասեց զիս։ Աւզեզութիւնն երկար ու  
վոանգալից եղաւ։ Աւզեզինի փախարէն պարտաւո-  
րուեցայ իբր պարզ նոււազ աշխատիլ, առանց ամե-  
նազտիկ աւուրչէք մը տոնելու և

Երբ Լոնտոն ելանք, հագուստներս ցնցոտիներու  
կը նւանէին և գրպանիս մէջ տոշար մը միայն ու.



Ներ : Առաջին օրուան ուտելիքիս եւ պառկելիքիս  
փարան ելաւ, բայց հնաւեալ օրը բացովեայ Ճա-  
շեցի ու պառկեցա, Եղարդ օրը գրիթէ առ-  
տուան 10ին միջոյները, կարողութիւնս հատած,  
Բորդլէնտ-Բլէյսի մէջ վեր վար կը բաշկրուեի,  
երբ տղայ մը, որ սպասուհիին հետ եր, զրօսանքի  
համար առուակին մէջ նետեց հիանալի տանձ մը:  
Պատառ մը բան կըլլար վերջապէս այդ աշուր  
տանձը, Բնականաբար կանդ առի և խռնաւ աչքս  
դամուեցաւ այս արդէն թաց նեկտարին վրայ Բեր-  
նիս ջուրերը կը վազէին: Ալրող էութիւնովս կը  
բարձայի անոր: Բայց այն վայրկենին երբ կը տրա-  
մադրուեի առնել, անցորդի մը նայուածքը կը կեցնէր  
զիս: Պիտի առնէի՞ թէ չպիտի առնէի: Եւտանձն  
զիս: Պիտի առնէի՞ թէ չպիտի առնէի: Եւտանձն  
էր: Վերջապէս որոշելու վրայ էի ամէն ար: Ժա-  
ժանապատուութիւն մէկդի թողուլ, երբ պատու-  
մը բացուեցաւ ետեւսու մէնիրլմէն մը, բարձր  
ձայնով պոսաց ինծի:

— Օհե՛, ներս ճուէք, կ'աղաշեմ:

Պերճաշուք սղասաւոր մը մտցուց զիս ո՛չ նը-  
ւազ պերճաշուք սենեակ մը, ուր յարդելի երեսոյ  
թով երկու պարոններ կուին: Սպասաւորը ճամբե-  
ցին ու նստեցուցին զիս:

Ճաշը նոր աւարտած էին: Սեղանին մնացորդնե-  
րուն տեսնը միայն գրեթէ մարեկիք կը անրէր վե-  
րասաւ Հաղիւ կրնայի ինքզինքս բռնել այն պնակնեն  
ընչեւ, որոց ձեռք դպցուած չէր տակաւին նենայ  
բանական բանական բանական բանական բանական

Բայց օրովհետեւ հրաւեր եղած չէր ինձ անոնց  
համը նայելու, պարկեցտ գիրը մը պահէլ պէտք  
եղաւ:

Հիմա, ըսեմ ձեզի թէ իմ գալէս վայրկնան մը  
առաջ այս սենեկին մէջ տեղի ունեցած եր խօ-  
սակյութիւն մը, որուն իմաստն ետքէն հազորդե-  
ցին ինծի: Բայց ես կուզեմ հիմակ անմիջապէս հա-  
զորդել ձեզի: Այս երկու Միւսիւները, որք եղբայր  
էին, առջի իրիկւն շատ տաք վիճաբանութիւն մը  
ունեցած էին, զոր ի վերջոյ որոշած էին աւարտել  
գրաւով մը: Անէն լու Անդիհացի համար, ինչպէս  
յայտնի է, անհամաձայնութիւն մը վերջացնելու  
եղանակն ա'ս է:

Անշուշտ մոռցած չէր թէ Անդիհոյ Պանքան, աս-  
էց առաջ երկու պանքնորդ հրապարակ հանած էր,  
իւրաքանչիւրը մէկ միլիոն սգերլինոց, զրացի Տէ-  
հան մը բացուեցաւ ետեւսու մէնիրլմէն մը, բարձր  
բուժեան մը հետ առեարական գործառնութիւն  
մը գլուխ հանելու սահմանաւծ: Այս կամ այն  
պատճառով այս պանքնորդներէն մէկը միայն գործառ-  
նուեցաւ ու ջեղուեցաւ: Միւս տակաւին պահուած  
էր պանքային նկուղներուն մէջ է՛հ ա՛ս երկու  
Միւսիւները, իւրենց իւսակցութեան ընթացքին մէջ  
Տարցուցած էին իւրարու թէ ինչ կոլլայ կատարե-  
լապէս պարկեցտ եւ ուշիմ մարդ մը, որ երկինքն  
ինկածի պէս լսուոն եկած ըլլալ, բացարձակա-  
րաս: Հաղիւ կրնայի ինքզինքս բռնել այն պնակնեն  
պէս անձանօթ եւ գրապանին մէջ ուրիշ բան չու-  
րուն առջեւ, որոց ձեռք դպցուած չէր տակաւին նենայ  
բանական բանական բանական բանական բանական

սպանքողը, որուն ի՞նչպէս իր ձեռք անցած ըլլ-  
լուր պիտի չկրնայ արդարացնել :

Մ'ծ եղբարին ըստաւ թէ, ի՞նչ պիտի ըլլու,  
անօթութենէ պիտի մեռնի • կրտսերը պատաս-  
խանեց թէ ո՛չ Ա.ը յարեց թէ մարդն իր  
պանքնողը պիտի չկրնայ ո՛և է տեղ աւրել ա-  
ռանց անմիջապէս ձերբակալուելու : Մարդն  
իբրև գող պիտի բանուի : Ոհմաբանութիւնը  
շարժակուեցաւ այսպէս, մինչև որ կրտսերը  
առաջարկեց 20,000 սղերլին գրաւ դնել որ  
փնտուած մարդն ամիս մը ամրող միջոց պիտի  
գտնէր առանց ձերբակալուելու ապրիլ այս մէկ  
միջին սղերլինոց պանքնողով :

Ա.ը ընդունեց գրաւն և Բ.ը ելաւ անմիջա-  
պէս Պանքան գնաց ու այն տեղ մնացած մէկ  
միջին սղերլինոց զրամատուար գնեց : Այս Անգ-  
լիացիք ուրիշ Կերպ չեն ըներ : Յետոյ գրասեն-  
եակ դասնարուն պէս, նամակ մը գրեց : զոր  
գեղեցիկ գրավ մը ընգորինակեցին, և ահա,  
երկու եղբարիները, պատուհանին առջեւ նստած  
այդ երանելի մարդը կը փնտուէին :

Ըստ պարկեշտ մարդեր անցան, բայց ո՛չ սը-  
րամիտ, և ուրիշ շատ սրամիտ մարդեր անցան,  
բայց ո՛չ պարկէշտ : Ա.երջան պէս այս յատկու-  
թիւններն ունեցող շատ մարդեր անցան, բայց  
աղբատ չեին, կամ թէեւ բատ բաւականին աղ-  
բատ, բայց բաղաբին մէջ անծանօթ չեին : Միշտ

արգելք մը կերնէր, մինչեւ որ զիս նշարեցին :  
Այն ատեն համաձայնեցան որ ես ամէն պայ-  
մոններն ունէի :

Ահա ասոր համար կը գտնուի հոն, այդ եր-  
կու եղբայրներուն աւշեւ, առանց գիտաւորութէ  
ինչո՞ւ : Նախ բանի մը հարցումներ ըրին իմ  
մասիս : Պատմութիւնս ամբողջ ընել տուրին : Ի  
վերց եղբակացուցին թէ բուն իրենց ուզած  
մարդն էի և ամէն պայմանները կը գոհացնէի :  
Պատասխանեցի թէ անկեղծորէն հիացած էի և  
կը փափաքէի այդ պատմանները զիտաւլ :

Այն ատեն անոնցմէ մին նամակ մը տուաւ  
ինձի, ըսելով թէ բացատրութիւնն անոր մէջ  
պիտի գտնէի : Բանալու վրայ էի, բայց իսկայն  
արգելեցին ու պատուիրեցին որ տունս երթամ  
ու խոհեմ և զդուշ ըլլամ : Հետաքրքրուած, պա-  
տասխանեցի բանի մը դիտդութիւններով,  
բայց ականջ կախող չեղաւ : Դուրս ելայ սրտնե-  
ղած, մտածելով սր թէրեւս գուեհիկ կատակի մը  
առարկայ եղած էի : Բայց աղբատ ու միումմինակ  
ըլլովով, ինըլինըս բռնեցի : Հիմա պիտի առնէի  
տանձը, նոյն իսկ ամենուն աչքին առջեւ : Բայց  
ալ հոն չեր : Առեր էին : Եւ այս անինեալ գէպին  
եր պատճառը : Այս պահուս, գորովալից զդա-  
ցումներ չեր որ կը տածէի իմ երկու մարդոցս  
համար : Փաղցին անկիւնը դառնալուս պէս,  
պահար անը կիսովին բացի և տեսայ որ մէջը գը-

բամ կար և ԱՇ, հարի շիալ ըսելու ձեզի թէ  
անմիջապես սիրեցի երկու պատուական Սիւսիւ-  
ները:

Առանց ժամանակ կորսնցնելու, նամակն ու  
դրամը բաճկոնակիս գրպանը դրի և ամենէն մատ  
ճաշորանը վաղեցի: Կերածս կրնաք գուշակելո

Յետոյ պանքեօս հանեցի: Պարզ ակնարկ  
մը անոր արժեքն հասկցուց ինձի: Կարծեցի թէ  
պիտի յարիմ: Մէկ միլիոն սդերլի՞ն: Գլուխս  
կը դառնար: Վայրկեան մը բարացած ու շլա-  
ցած մասի պանքնօդին առջև, ինըզինքո գտնել  
կարենալէ առաջ: Առաջին բանը զոր դիտեցի,  
ճաշարանին տերն եղաւ: Աչըլ պանքնօդին տըն-  
կած, անշարժ կեցած էր, հիացած, զմայլած,  
շուարած, հոգի տալով և առանց կարենալու ո՛չ  
ոտքը ոչ ձեռքը շարժել: — Արան տուէք, կ'ա-  
ղաշեմ, ըսի, անփութօքէն, իրեն երկնցնելով  
պանքնօդը: Այս խօսքերն իրականութեան բե-  
րին զինք, խոնարհաբար ներսւմ ինդրեց որ  
շկրնար վրան տալ, առանց համարձակելու ձեռ-  
քըն առնել պանքնօդը: Աչերովով կը խմեր զայն  
տեսակ մը պաշտումով, իբր թէ գտնուած ըլ-  
լար նուիրական առարկաի մը առջեւ, ինեղէ  
մարդկութեան համար անհպիլի, ըղձալի բայց  
անմատեցելի:

— Կը կրնեմ, վրան տուէք, ըսի: Ուրիշ  
ստակ չունիմ:

Պատասխանեց թէ ի՞ր իմ տիամագուռա-  
թեանս տակ էր և ստակը կրնայի վճարել երբ  
որ տղեի: Իմ դիտողութեանս վրայ թէ կրնայի  
երկար ատեն արդ փողոցէն չտնցնիլ, պատաս-  
խանեց որ խնդիրը կարեւորութիւն չունէր, թէ  
Կոսպասէր ինձ, թէ կոնայի միշտ հրամայել  
ինչ որ ուգեի և այս վարկը պիտի տեէր որբան  
որ փափաքէի: Աւելցուց թէ կատարեալ վստա-  
հութիւն ունէր ինձի պէս մէներլիմենի մը վը-  
րայ, հակառակ իմ հացուստիս և այն հաճոյ-  
քին զոր կ'զգալի ծպտումովս աս ու ան ծաղրե-  
լով: Զիս տարօրինակ հարուստի մը տեղ կը դը-  
նէր, որ ասանկ ձեւերով կը սիրէ զուարձանալ  
իրեն պէս խեղճ մարդոց հետ: — Այս պահուն  
յաճախորդ մը ներս մտաւ և ճաշարանին տերը  
նշան ըրաւ ինձի որ գրպանս դնեմ Քլոնտայքս  
խոնարհելով մինչեւ գուտը տարաւ զիս: Ուղ-  
ղակի իմ երկու մարդոցս տունը գացի, շուտով  
դրամանելու համար հաւանաբար գործուած սը-  
խալը, ոստիկանութեան ձեռքն իյնալի առաջ: Զիղերս  
գրգռուած էին, նոյն իսկ մտահոդ էի, թէեւ,  
ինչպէս գիտէր, բնաւ յանցանք չունէի:  
Բայց մարդիկը ճանչցած ըլլալովս ապահով էի  
թէ մէկու մը 20 կամ 40 սդերլիննոց պանքնօդի  
տեղ՝ միլիոննոցը չեն տար, առանց անոր դէմ կատ  
զելու, թէեւ իրենց անուշագրութեան նայելու են  
աւելի: Ցունին մտենալով, սկսայ աւելի հան-

8 — զարտիլ, ովաչետև տակնիվերաբութիւն մը չե  
կար: Անշուշտ, տակաւին նշանած չեին սը-  
խալը: Դռւոր զարկի: Սպասուորն երկցաւ: Հարցուցի թէ ո՞ւր են Միւսիւները: — Մեկնե-  
ցան, պատասխանեց ինձի ամենայն հանդար-  
առթեամբ:

— Մեկնեցան: Բայց ո՞ւր: Կը ճամբորգեն,  
— Ո՞ր կողմ:  
— Կարծեմ Եւրոպա:  
— Բայց ո՞ր կողմ, ո՞ր ճամբով:  
— Չեմ գիտիր.

— Ե՞րբ պիտի դառնան: Ամիսէ մը: Անանկ ըսին:  
— Ամիսէ մը: ահանդի բան: Միջոց տուեք  
ինձ ուրեմն որ բանի մը տող գիր գրեմ իրենց.  
Եխա կարենոր է:

— Իրաւ որ, Միւսիւ, չեմ կրնար: Գաղա-  
փար իսկ չունիմ թէ ո՞ր կողմ գացին:

— Ան առեն, պէտք է որ իրենց ընտանիքէն  
մէկը տեսնեմ:

— Ըստանիքն ալ, Միւսիւ, Եգիպտոս կամ  
Հնդկաստան կը ճամբորգէ:

— Բայց, բարեկամ, խոշոր սիալ մը տեղիու-  
նեցած է: Անշուշտ այս իրիկուն պիտի դառն-  
ան: Ըսէք իրենց թէ հկոյ, թէ նորէն պիտի  
գամ, թէ հոգերնին չընեն:

— Կրսեմ, եթէ դան, բայց չեմ յուսուր որ  
դան: Ըսին ինձի թէ անշուշտ իրիկունը պիտի  
գայիր աեղեկութիւն առնելու համար, բայց հը-  
րաման ունիմ կրկնելու ձեզի թէ ամեն բան  
յաւ է, թէ ուզած ատեննին պիտի դառնան և  
թէ ան ատեն պիտի ընդունին ձեզ:

Առնել բալելէ զատ ուրիշ բան չեր մնար ը-  
նելու: Ի՞նչ աւեղծուած էր աս: Խելքս կը մո-  
լորէր: Ի՞նչ կը նշանակէր սա խօսրը: — Ուզած  
ատեննին պիտի դառնան: Ա՛հ, նամակն անշուշտ  
պիտի իմացնէր ինձի: Մոռցած էի նամակը: Ասի ու հետեւելը կարդացի.

“ — Դուք ուշիմ ու պարկեշտ մարդ մ'էք:  
Զեր գեմքէն յայտնի է: Կը կարծենք թէ աղ-  
բատ էք և այս բաղաբին մէջ բոլորովին անծա-  
նօթ: Ներփակ պիտի գտնէք դրամ, որ 30 օր-  
ուան համար փոխ տրուած է ձեզի, անտոկոս: Պայմանաժամին մեր տունը բիրէք: Զեր վրայ  
գրաւ մը բոնած եմ: Եթէ շահէիմ, ուզած պաշ-  
տօննիդ պիտի տամ, կը բաւէ որ կարողութեանս  
սահմանին մէջ ըլլայ և դուք ալ կարող ըլլայ  
գայն կատարելուու: —

Ո՞չ սառորադրութիւն, ո՞չ հասցէ, ո՞չ թուա-  
կան: Ծովուա՞յ մ'էր արդեօք: Դուք, ընթեր-  
ցող, գործին էութիւնը զիտէքի: Ես չեի գիտեր-  
Հանելուկն անլուծելի կ'երեւար ինձի: Գեշու-  
թիւնս կ'ուզէին թէ աղեկութիւնս: Հանրային

պարտեզ մը գացի նստայ և սկսայ ընելիքիս վը-  
րայ խորհիլ . Ժամէ մը որոշումս տուած էի :  
—յօ Միւլիւները կը ծաղրե՞ն զիս թէ աղէկու-  
թիւնս կուզեն : Ճար չկայ գիտանլու : Զի խօ-  
սինք ալ այդ թնդրոյն վրայ . Խա՞ն է թէ փորձ .  
Կտրիլի չէ հասկնալ : Զմասածենք վրան : Աեր-  
ջապէս , գրաւ մը բռնուած է : Խնտոր հասկը-  
նալու է թէ ինչ բանի համար է : Ուզածիթշափ  
ենթադրութիւն ըրէ : Բայց ինչ որ ստոյդ , ի-  
րական և շօշափիլի է , առ է որ պանքնօդը ձեռքս  
է : Եթէ Պանքայէն ինդրեմ հաշուընթաց մը  
բանալ այս պանքնօդին տիրոջ հաշւոյն , (այսինքն  
պանքնօդը ձգեմ ու փարա առնեմ,) անշուշտ  
կընէ , վասնզի թուղթին տիրոջ անունը ծանօթ  
է իրեն , թէե ես չեմ գիտեր : Բայց անշուշտ  
պիտի հարցնեն ինձի թէ այդ չէքն ինտոր իմ  
ձեռքս անցած է : Եթէ ճշմարտութիւնն ըսեմ ,  
թերեւ յիմարանոց նետեն զիս : Եթէ ստեմ ,  
շխտակ բանտ կը տանին : Միւնոյն արդինքը  
տեղի պիտի ունենայ , եթէ այս պանքնօդն ո՛ւ և է  
Պանքա մը ձգեմ իմ հաշւոյս և փոխառութիւն  
ընեմ : Բաել է , ուզեմ շուզեմ , այս ծանր բե-  
ռը պիտի քաշըշեմ հետո , մինչեւ որ այդ Միւ-  
լիւները դառնան : Այս պանքնօդը բան մը չեմ  
կրնար ընել , ո՛չ իսկ ափ մը մոխիր : Եւ պէտք  
է հոգ տանիմ , պէտք է հսկեմ անոր վրայ —  
ու մուրամ : Նոյն իսկ , եթէ ուզեմ ալ , պիտի

չկրնամ զլիես Տէվ ընել , Պարկիշտ մարդ մը ,  
ինչպէս նաև զող մը . պիտի շուզեն ընդունիլ  
զայն . Երկու եղայրները վախու բան չունին :  
Պանքնօդը կորսնցնեմ ալ , այրեմ ալ , իրենք փո-  
խարժէքը պիտի գտանձեն միշտ Պանքայէն : Եւ  
ես ամիս մը պիտի տանձուիմ առածց ամականի  
առանց շահու : Այս՝ բայց եթէ յաջողիմ գը-  
րաւը շահեցնել տալ , Խօստացուած պաշտօնը  
պիտի ընդունիմ : Ահա՝ եզրակացութիւն մը որ  
կործիս աղեկ կուգայ : Բայց գրա՞ւն ինչ բանի  
վրայ է : Ան ալ շգիտեմ :

Այս տեսակ մարդերը նախանձելի պաշ-  
տօններ ունենալու են իրենց տոպրակին մէջ :  
Սկսայ , այդ պաշտօնն երազել մեծ յաւակնու-  
թիւններ ունեցայ : Անշուշտ խոշոր ամսական  
մը պիտի տոնեի : Եւ ասիկա պիտի սկսէր ամի-  
սէ մը : Յետոյ : ամէն բան ուզածիս պէս պի-  
տի ըլլար : Այս մտածումներուն վրայ , պատ-  
րաստ զգեստի մեծ վաճառատան մը առջեւ գր-  
տայ , ինքինքս : Ուզեցի ցնցոտիներս հանել ու  
վայելուց զգեստ մը հագնիլ : Բայց պիտի կըր-  
նայի : Ո՛չ , բանի որ աշխարհի մէջ ուրիշ բան  
չունէի բայց եթէ մէկ միջիսն սդերլինոց պանք-  
նօդ մը : Կերթայի կուգայի վաճառատան տո-  
գեւ , առանց ուրշում մը տալու : Աերջապէս ո-  
րոշեցի : Աշճառատունէն ներս մտայ , և հար-  
ցոցի թէ պարտքի փոխարէն թողուած կամ տ-

պապրուած և յետոյ շանուած զգեստ կա՞ր։  
Պաշտօնեան, որուն դիմեցի, ուրիշ պաշտօնեայ  
մը ցոյլ տուաւ զլառվ, առանց բառ մը ըսե-  
լու։ Երբ այդ պաշտօնեին բով հասայ, միենոյն  
նշանացի պատասխանն առի և վերջապես գացի  
երրորդ պաշտօնեի մը բով, որ ըստաւ։ —Այսու-  
կեանէ մը։ Կ'աղացեմ։

Գործն աւարտելուն պէս անկիւն մը տարաւ  
զիս և թողուած զգեստ մը հանեց։ Հագայօ Բը-  
նաւ վրայիս չեկաւ։ Բայց նոր եր և ես ալ ըս-  
տիպողական պէտք ունէի։ Ուստի, գործիս գա-  
լու պէս ցոյլ տուի և ըսի վեհերու։ —Գործիս  
հուգայ, եթէ բանի մը օրսպասէք, որովհետեւ  
վրաս ստակ չունիմ։

Բարեմիտ մարդն ամբարտաւան ձեւ մը տուաւ  
—Ահա ադ Խօսքին չեի սպասեր, ըստաւ։ ԿԸ  
կարծէի թէ ձեզի պէս Միւսիւ մը հազարնոյ  
պանքնօդներ ունենալու է վրան։

Բարկացայ ու պատասխանեցի։ —Բարեկամու  
ուրիշները պէտք չեւ դատել միշտ իրենց հա-  
զաւաներէն։ Ձեր շնորհիւ, վրաս ստակ ունիմ  
վճարելիք, միայն չեւ ուզեր շփթութիւն պատ-  
ճառել ձեզ Խօչոր պանքնօդի մը վրան ուզե-  
լով։ Թերեւս չկրնայիր տալ։

Մորդը թիւ մը մեղմացաւ։ —Գէշ Խօսք մը  
ընել չուզեցի, ըստաւ։ Կրնանք փախել ի՞նչ պանք  
նօդ ալ ըլլայ վրանիդ։ Կրնանք, Միւսիւ, կրնանք

— Լաւ, կարճ կապենք, պատասխաննշի  
պանքնօդն երկնցնելով անոր։ Պաշտօնեան առաւ  
ժկտելով։ —Մին այն ժպիտներէն որբ գէմրին  
շրջանը կլնեն երկայնքէն, լայնքէն ու մէջէն խոռ-  
ոոչ բանալով, ճիշդ ինչպէս կ'ընէ մանրախիճը,  
ծովուն երեսին վրայ։ Եւ յետոյ նայուածը  
պանքնօդին վրայ կանգ առնելուն պէս, ժպիտը  
բարակաւ շրթունքներուն վրայ, որբ գեի դե-  
ղին կտրեցան, ինչպէս հարած մետաղի այն ադ-  
տերը, որբ կը գտնուին Վետովի կողին վրայ։  
Տակաւին ժպիտի առանկ բարացում չէի տեսած։  
Բարեմիտ մարդը գետինը գամուած կեցած էր,  
պանքնօդը ձեռքը։ —Ի՞նչ է, ի՞նչ կայ պոռաց  
խանութպանը, որ մեզ նշմարեց։

— Բան մը չկայ, դիտել տուի, միայն թէ  
կ'սպասեմ որ պանքնօդին վրան տրտւի։

— Ե՛, ինչո՞ւ կեցեր ես, դօտ։ Մնտուկը  
գնա՞ աւրեւ։

— Աւրեմ, պատասխանեց դօտ։ Ըսելը  
դիւրին է, Միւսիւ։ Հանեցէք դուր ալ աչքէ  
անցընել պանքնօդը։

Աւրպիտն ակնարկ մը ձգեց թուղթին վը-  
րայ եւ պերճախօս բացագանցւթիւն մը արձա-  
կեց։ Յետոյ զգեստներու գելերուն վրայ յար-  
ձակելով, իրարու ետեւէ վար առաւ, ինքնիրեն  
խօսելով։ — Տորորինակ միլիոնատերի մը ատանկ  
խղճալի զգեստ ծախել։

Առ յուզումը զսպել ջանալով շարունակեց . — Քառ ինչնդ է ի՞նչ է : Աս՝ նաև : Միլիոնատերները պիտի հեռացնե վաճառառառունես : Զը կրցանք սովորեցնել սրբոր միլիոնատեր մը որոշել աղբառէ մը : Է՞ն, վիճառած գտայ : Կ'աղաշեմ Միւսիւ, հաճեցեք մեկդի նետել այդ զգեստը զոր սա Ճախաւեր աղան կ'ուզեր հագնել ձեզի Կրակը նետեցեք, Միւսիւ, կրակը : Ըսորհ ըրեք սա գոսթիւմը փորձելու : Ո՞հ, Միւսիւ, ի՞նչ աղաւոր եկաւ Պարզ է, վայերուշ է, ճաշակաւոր է : Դուքսի մը համար ջինուած էր . ա՞հ, ոչ, օտար իշխանի մը համար ջինուեցաւ : Աը ճանչնաբ անշուշտ, Միւսիւ, նորին Պայծառափալլ Բարձրութիւն հօսքոտարն Հալիֆաքսի<sup>(\*)</sup> : Ո՞հ, ամէն տեսն չենք յաջողիր մեր առաջնակարգ յաճախորդներուն զգեստ հաւանեցնելու : Տ-փառն հիսանալի եղաւ, Միւսիւ : Հիմա բաճակոնակը նայինք : Օ՛, օ՛, կատարեալ : Պուազօնայեցեք, դուք ալ նայեցեք, Միւսիւ : Հիսանալի, հիսանալի : այս գործին ոկոնելու ի վեր, առակաւին տեսած շեի զգեստ մը որ ա՛յօշտն ազւոր վալեր :

Գոհիւնակութիւնս յայտնեցի : — Ըստ ու-

<sup>(\*)</sup> Հալիֆաքս՝ Քանատայի բաղաբ, Հօսքոտար : Ուլոհ իշխաններուն տիտղոսը : Մարդը շուարերէ, բնիրնին եկած Քօմքին թող կուտար:

Ծ. թ.

յախ եմ, երջանիկ եմ, Միւսիւ : Բայց պիտի տեսնէք թէ շափու վրայ ի՞նչ սբանչելի գործեր կ'պատրաստենք : Ձեզ պես մենաբլենի մը ո՞ւ շափ պիտի վայլէ շափի վրա կարուածը : Ըսու ըրէք, Գօտ : Գրիչ մը առեք ձեռքերնիդ : Ես ըսեմ գուք գրեցէք . — Սրունքի երկայնութիւն 32 . . . են. են . . .

Տակաւին ես խօսք մը չըսած, շափերս առանուած եին, երեկոյթի, առաստ ան, կես օրուան են : զգեստներու, ըրտէնկօդներու, Սըմօքիններու, Ֆրաքներու յանձնարարութիւններուն արձանագլուած : — Բայց, ըսի երբ ժամանակ թողուց խօսելու, շեմ կրնար այդ ամենըն յանձնարարել ձեզ եթէ պանքնօդիս վրան շտաբ, կամ ժամանակ մը չսպասէք :

— Ժամանակ մը : Օ՛հ, ադ ի՞նչ խօսք է, Միւսիւ : Թողէք որ շատ տկար բառ մը ըսեմ, — յաւիտեան . այո՛, Միւսիւ, յաւիտեան կ'սպասենք : Ահա պատշաճ խօսքը : Գօտ, շուտով ծրաբէ ամենքն ալ : Թող ճէնգլմէնին ապարանքը տանին : առանց վայրկեան մը ուշացնելու : Ծուտ, առեք Միւսիւին հասցեն և . . .

— Ո՞հ, տունէն ելնելու վրայ եմ, ըսի : Ես անցած տեսնս կը ձգեմ նոր հասցես :

— Ըստ լաւ, Միւսիւ, ինչպէս որ կուզէք : Թոյլ տունէք որ ճամբան ցոյց տամ : Մեծ պատիւ կը համարիմ ինձ եթէ նորէն տեսնեմ ձեզ :

է՛, ընթերցող, հետեւանքը կը գուշակելի  
բնականաբար սկսայ ինձի պէտք եղած բոլոր  
բաները զնել, պանքնօդիս վրան ուզելով ամէն  
աեղ: Ութ օրեն, զետեղուած էի Հանգեռ-  
Արօսերի (Հրապարակ) առաջնակարգ մէկ օդե-  
լին մէջ: Իրիկուած ճաշս հոն կ'ընեի: Բայց  
ցերեկուան ճաշի համար ամէն օր հաւատար-  
մօրէն կ'երթայի Հարիսի խոնարհ ճաշարանն ուր  
առաջին ճաշս ըրած էի մէկ միլիսն սդերլիննոց  
պանքնօդիս ստուերովը: Արանչելի ուերլամ մը  
կ'ընէի իրեն աւապէս: Լուր ասրածուած էր ա-  
մենուրեք թէ այն խորհրդաւոր օտարակինը, որ  
բանկոնակին գրպանին մէջ մէկ միլիսն սդերլին-  
նոց շեք մը աւնէր, պաշտպանն էր այդ ճաշարա-  
նին: ասիկո բաւական էր անշուք խունութը,  
որուն տէրը մինչեւ այն ատեն օրն օրին կ'ապ-  
րեր, ո լամօտ ճաշարան մը եղաւ, յաճախորդ-  
ներով իճողուած:

Կամայ ակամայ ստիպուեցայ ընդունիլ Հա-  
րիսի տուած գրամմերը, իբր փոխ Գրպաններս  
ոսկիով լեցուն:

Հարուստի պէս կեանք կ'անցընեի: Կը նաև  
խատեսէի թէ օր մը չե՞ս: մը բրտիւը պիտի  
պայթէր, բայց ծովուն մէջն էի: Պէտք էր դուրս  
ելնել կամ Խղդուիլ գիշերը: կացութեան-  
ողերդական կողմը կ'երեւեր ինձի յստոկ ո-  
սպասնալից: Քունս կը փախչեր: Բայց, արշա-

լոյսի առաջին շողերուն, մղաւանջը կ'անհետա-  
նար ինենդ լրյուի մը անոյշ ճառադայթներուն  
առջեւ և Եւ շատ բնական էր ասիկա: Աշխար-  
հի առաջին մայբուրապարին նշանաւոր գեմքերէն  
մին եղած էի: Անկարելի էր անգլիական կամ  
սկզբական կամ իրլանտական թերթ մը բանու-  
տանց գտնելու ամէկ միլիոն սդերլիննոց չեք  
մը ունեցող մարդունց վրայ ընդարձակ ու ման-  
րամասն տեղեկութիւններ: Անունս որ նախ  
Չանազան Լուրերպառուն մէջ նետուած էր, յա-  
ջորդաբար անցաւ ազնուական գասակարգերէն  
Դուբերու, Լուրերու ազնուատահմ իշխաննե-  
րու և մինչեւ անգլիոյ առաջնակարգ պետական  
մարդոց անուններուն հետ խառնուելով: Եւ  
տակաւին ծալրն ենք ծրարոց: ահա Բլինձ, ան-  
գլիոյ առաջին զաւեշտական թերթը, իր ընտ-  
րեալներուն մէջ ընդունեց զիս: ալ փառքս  
կազմուած էր: Ծալրանկարներ, այս, բայց  
զրեթէ յարգալից: Նըրելք թշնամանող է կրնար  
երեւակայիլ մտքի վիճակն անձանօթ բարի տղու-  
մը, որ ահա խօսք մը չի կրնար ըսկել ու շար-  
ժում մը չի կրնար ընել: առանց ըրջապատուե-  
լու տեղեկաբերներէ կամ լուսանկարներէ, որ  
դուրս չի կրնար ելնել առանց լուկու սա խօս-  
երը. «—Կուդայ՝ կոր, կուդայ՝ կոր: Կա,  
նա: Ինքն է ո: անկարելի է դուրսը ճաշել, ա-  
ռանց զրացներու ուշաղրութեան առարկալ ըլ-

լալու, և աւկարելի է թատրոն երթալ առանց բոլոր սրահին դիտակներուն առարկայ ըլլալու է՛մ, այո՛, օրնի բուն փառքի մէջ կը ըլլայիս ճակատագիրս ա՛ս եր . Որովհետեւ խնամքով պահած էի զնցոտիներս, երբեմն կը հագնէի զանոնք և կ'երթայի չնշին բաներ կը գնէի մէկ միլիոն սղերլիննոց պանքնօթովս շանթ=հարելու համար այն խեղձ պաշտօնեան որ գեշ ընդունելութիւն կ'ըներ ինծի : Բայց այս խաղը շուտ հինգաւ : Պատկերազարդ թերթէրն այնքան ընտանի դարձուձած էին դեմքս, որ դուրս ելնելու պէս բազմութիւնը կը շրջապատէր զիս : Եթէ խանութ մը երթայի, տէրն անմիջապէս կ'առաջարկեր խանութին եղածը չեղածը ապառիկ տալ ինծի, տակաւին ես պանքնօթս հանելու ժամանակ չաւնեցած :

Ոդիսականիս տասներորդ օրը պարտաւորութիւն սեպեցի երթալ մեր դեսպանն ողջունել : Խանդավառութեամբ ընդունեց զիս եայցելութիւնս ուշացուցած ըլլալուս համար յանդիմանեց . Խնդալով ըստ թէ մէկ միջոց ունէի իր ներութմ ստանալու, այսինքն իրիկունը գոյ մասնակցիլ իր սեղանին հրաւիրեալներէն միոյն տեղ որ պատճառով մը պիտի չիրնար ներկայ զանուիլ : Ընդունեցի : Խասկցութեան ընթացքին մէջ հանձնաւ յիշեցնել ինչ թէ հայրս ու տեղենութեան մէջ հանձնեցի իր կուգայութիւններէն աւելի ծախը ըլնել : Բնականաբար տակաւին չեի գիտեր թէ ամսականս քանի էր : Սակայն կրնարի ենթադրութիւն ընել : Գնահատման լուրջ հիմ մը չունէի՞ սա իրողութեան մէջ թէ գուաւը շահեցնելով, պիտի հրաւիրուեի պաշտօն մը ընտրել իմ հարուստ բարեկամներուս վաճառատան մէջ, ձեռնհասութիւնս — որուն վրայ տարեկոյս չունիմ — ապացուցանելու վերապահութեամբ : Գլուրաւը շահեցնելուս վատահ էի : Աս ամսականին գործին նայինք : Ինծի կուգայ որ տարեկան 480 սգերլինն և 1000 սգերլինին մէջը պիտի ըլլայ : Ըստ 480 սգերլինին առաջին տարւոյն համար

տոյ զիրար դտած էին ետի համալսարանին մէջ և միշտ պահուծ էին բարեկամական մտերիմ յարարերութիւններ : Ի վերջոյ խնդրեց ինձմէ որ պարապոյ ժամերուս գեռպանատուն երթամ : Ես ալ չմերժեցի . յուսացածէս աւելին էր աս եթէ բրամիք պատահէր : Տիւրընկալս կատարեալ կործանումէ մը փրկէր զիս թերես . բայց ինչպէս : Զեհ գիտեր : Անշուշտ միջոց մը պիտի գտնէր : Հիմա շատ ուշ էր սիրու իրեն բանալու համար, ինչպէս պիտի բանայի առաջին անգամ Լուսոն գալուս : Ոչ . չեի կրնար վասնգել զիս Այնքան առաջ գացած էի որ ատանկ խոստովանութիւն մը չեի կրնար ընել նոր բարեկամի մը : Ծարրայեղ խնամք կը տանէի եկամուտէս, ըստ կ'ուզեմ ամսականներէս աւելի ծախը ըլնել : Բնականաբար տակաւին չեի գիտեր թէ ամսականս քանի էր : Սակայն կրնարի ենթադրութիւն ընել : Գնահատման լուրջ հիմ մը չունէի՞ սա իրողութեան մէջ թէ գուաւը շահեցնելով, պիտի հրաւիրուեի պաշտօն մը ընտրել իմ հարուստ բարեկամներուս վաճառատան մէջ, ձեռնհասութիւնս — որուն վրայ տարեկոյս չունիմ — ապացուցանելու վերապահութեամբ : Գլուրաւը շահեցնելուս վատահ էի : Աս ամսականին գործին նայինք : Ինծի կուգայ որ տարեկան 480 սգերլինն և 1000 սգերլինին մէջը պիտի ըլլայ : Ըստ 480 սգերլինին առաջին տարւոյն համար

և այսպէս տարրուէ տարի մինչեւ 1000 սգերլինս չիմակու հիմա առաջին տարեկանիս միայն իս բաւունք ունիմ։ Ամէն մարդ ստակ դրած էր տրամադրութեանս տակ, բայց ստ կամ նա պատրուակով մերժած էի միշա, այսպէս որ ըրած փոխառութիւններս հազիւ 240 սգերլինի գումար մը կը ներկայացնէին։ 240 սգերլին ալ ծախըերուս ու գնումներուս համար, եղաւ 480 սգերլին։ Հաշիւ կընէի որ երկրորդ տարեկանս մինչեւ ամսոյն վերջը պիտի տանէր զիս, ինայոցութեամբ և կանոնաւորութեամբ ապրելով, ամէսը լմննալուն, Միւսիւնները պիտի դառնային իրենց ճամբարդութենէն և ես պիտի կրնայի պաշտօնիս գլուխն անցնելով, մուրհակներ տալ պարտապահանջներուս։

Տասնըշորս հոգինոց փառաւոր ճաշ մը տրւեսցաւ գեսպանատան մէջ, Կերկո, էին Դուքս և Գրուհի Հոգիրիվելյա և իրենց ողիկը։ Լէտի Կրէյս էլեւոնոս, կամս և կամսուհի Պելրօրթ, Գերկոնս Պօնմարշէ, Լարտ եւ Լէտի Բրըտօմ, բանի մը երկսեռ անտիտղոս անձեր, գեսպանը, կինը, աղջիկը, եւ ասոր բարեկամուհին Միս (օրիորդ) Բռութիս լանկամ, որ բանի մը օրէ ի վեր հիւր եր դեսպանատունը։ Իրարմէ զոհ մը նացինը ամենը ալ, ակնոցի պետք չկար ասին առանենք լանկամ, ուրիշ հրաւիրեալ մ'ալ կար, ամերիկացի մը։ Բայց շամապարենք։ Կե-

շէք որ տեղն ի տեղօքը պատմեմ։ Տակաւին սոլթօն էինք եւ կ'սպասէինք որ ամէն հիւրերը հաւութրուին, երբ սա անունը ծանուցուեցաւ։

—Մոդր Լոյա Հասղինկու։

Բարի եկաքի առաջին խօսքերը փախանակուեւէ ետք, Հասղինկու նշմարեց զիս եւ շիտակը վըս եկաւ ժպտելով ու ձեռքերը մտերմօրէն երակնցուցած։ Յետոյ, ձեռքս սեղմելու տան, յանկարծ կեցաւ։ —Ներողութիւն, Միւսիւն, ըստ շփոթութեամբ, կը կարծէի թէ պիտի ճանչնամ ձեզ։

—Ա՛Ն, իրօք ալ ճանչցաք, վաղեմի ընկերու-

—Դուք էք հա՞ս կարելի՞րան է, Բայց դուք,

—Պանինօդ ունկցող մարդն եմ, պիտի ըսէիր։ այո՛, այո՛, նոյն ինքն եմ։ Օհ, կրնար մականունս տալ։ Մի՛ վախնաք, վարժուած եմ ես,

—Ինչ սիրուն անակնկալ։ Մէկ կամ երկու անգամ կարդացի ձեր անունը, բայց չեի կարծեր որ իմ վալեմի բարեկամ ՀՇնի Առամն էք, Աեց ամիս շըներ որ տակախին պաշտօնեայ էիք Պլէք Հօրբինս պանցային մէջ, ի Սան Ֆըրանչիսօ։ Հիմա Լոնտոն էք, միլիոնատէ՛ր եղած, տիեզերական գէմք մը դարձան։ Հաւզար եւ մէկ զիշերներու պատմւթիւններն են որ տեղի կունենան։ Խելքս չի հասնիր, վաղեմի բարեկամ։ աշբերուս չիմ հաւտար։

— Ա՛յտ . որչափ ալ ըլլու . իւնմէ աւելի  
չէք կ'նար զարմանալ իմին ալ հաւառլ" չի  
դար .

— Ի՞նչ զարմանալի բան է . ճիշդ երեք ա-  
միս ասած դավերն տէ Մին էինք միասին .

— Ո՛չ . Հօդ-1իես պանդոկն էնոք .

— Հա՛ , իրաւունք ունիք , հոն էինք . աւալը-  
ւան 2ին եկանք , բողէդ մը կիրանք եւ գա-  
ւաթ մը խաչուէ խեցինք . վեց ժամ շարու-  
նակ հաշիւներու եւ թիւերու վրայ աշխատելով

վայն ի վրանիս գալէ ետք . Կը յիշեմ որ ա-  
մէն բան ըրի համոզելու համար ձեզ որ մինա-  
չեւ լուսոն ընկերանաբ ինձի . արձակուրդ  
խռոտացայ , բոլոր ծախքերը վճարել յանձն  
տոի , բայց չկրցայ համոզել ձեզ . Կըսէիք թէ  
պիտի չի յաջողէի , թէ չէիք ուզեր ձեռքերնուդ  
գործը կորսնցնել . թէ գժուարութիւն կար  
դառնալու համար . Եւահա հոն էք . Ի՞նչ  
զարմանալի բան . պատմեցէք նայիմ ինտո՞ր  
եղաւ .

— Ո՛հ , պարզ գեպք մը . Մնաց որ երկար  
պատմութիւն է . վեպ մը , գրեթէ երազ մը .  
Կը պատմեմ ձեզի , բայց ոչ հիմա .

— Ե՞րբ .

— Ամսուն վերջը .

— Դիւ 15 որ պիտի սպասե՞մք . 8 օրէն  
չը Ալլար .

— Կորելի չէ . սիրելիս : Բայց ձեր գործերն  
ի՞նչ ջուրի վրայ են :

Այս խօսքերուն վրայ , մարդուն զուտըթև-  
թիւնն ու ոգեւորութիւնը մարեցան և հառա-  
շելով պատասխանեց . — Ո՛հ , դուք շտա  
գուշակած եիքք գալու չեի : Ինչ և է , չի խօ-  
սինք ո՛լ ասոր վրայ :

— Ընդհակառակն , խօսինք . այս իրիկուն իմ  
օդէլս եկեք և ամէն բան պատմեցէք ինձի :

— Իրաւ կ'ուզէք որ պատմեմ :

Աչքերը լիցան : — Կ'ուզէմ ձեր ամբողջ  
պատմութիւնը գիտնալ .

— Ո՛հ , ո՞րչափ երախտապարտ եմ ձեզ . Գիտ-  
նալիք թէ ի՞նչ ուրախութիւն է ինձ համար հան-  
գիտիլ բարեկամի մը . որ տակաւին կը հետա-  
քրքրուի իմ գործերուս , իմ անձիս :

Զերս ուժավ սեղմեց եւ զուարթ դէմք մը  
առաւ մինչև ճաշի ժամանակ , որ տեղի չունե-  
ցաւ : Եւ ինչ որ պիտի պատահէեր , պատահեցաւ  
Նախաթոռութեան վրա , համաձայնութիւն չի  
գոյացաւ ու ճաշը տեղի չունեցաւ . Անգիւա-  
ցիք , — ամէն մարդ զիտէ ոս — միշտ իրենց  
տունը փորերնին կը կշացնեն ուրիշ տեղ ճա-  
շի երթալէ առաջ . Բայց առարկան մը , որ  
նախազես չգիտեր , ծուզակը կիյնաւայինցէւ  
ոս բարի Հասողինկը , որ ծոմ բերնով եկած  
էր . Բայց սիրդէն պատմեմ : Պատմենց ու թէ

թեփ տուինք և մեր պղամիկ թափորը ճաշապ-  
րահ գնաց : Հոն սկսան դժուարութիւնները :  
Հօդուիվէի դուրսը սեղանին մէջտեղ նստիլ  
կուզէր իբր ներկայացուցիչ վիհապետի մը ,  
մինչ մեր դեսպանն ալ աղք մը կը ներկայացը-  
նէր : Խոկ ես յայտարարեցի թէ ամեներն չեմ  
հրաժարիր իրաւունքն : Զէ՞ որ լրագիրներուն  
մէջ ազնուատոյնմ իշխաններէն անմիջապէս ետք  
իմ անունս կուզար : Ծնուռնդո իրեսին զարկին  
ու ըսին թէ իմ գերզաստանին ծագումը շատ  
հին չէ : Ազո՞ր փաստ . այդ փաստն իրենց  
դարձուցի եւ ըսի թէ ես ուղղակի գիծով սերած  
եմ Աղամէն , որուն անունը կը կրեմ . մինչ  
Դուրսը կողմանակի ձիւղին կը պատկանի . Սոյն  
վիճաբանութեան արդիւնքը սա եղաւ որ թաւ-  
փորին գլուխը դէպի սալոն դալուցինք ուր իս-  
կոյն թեթեւ ճաշ մը հրացուեցաւ մեզի որուն  
շուրջը շարուեցանք ուղածնուս պէս : Հոն , ար-  
դարեւ նախաթօռութեան պաշտամունքը նուազ  
րուոն է : Ճաշն աւարտելէն եւ զովացուցիչը-  
պելիները խուռելէն ետք , խաղի նստանք , մէկ  
թառքին 5 բենայի : անգլիացիք լոկ զբօսանքի  
համար չեն խաղար երբեք : Երեկոյթն սբանչե-  
լի եղաւ , գեթ երկու հարիի , այն է Միա բար-  
թիա Լանկաշիր եւ իր պաշտուիին համար . Զիս  
անքան կապեց կախարդեց այդ աղջիկն որ ու-  
շագրութիւն ըըրի խաղին . Խոշակիցս ալ այնպէս .

Բայթին լմայած էր արդէն ու մենք նշարած  
իսի չէինք : Երջանիկ էինք : Մնացածը որին  
հոր Այր՝ համարձակեցայ բանել իրեն թէ կը  
արեմ . իսկ ան , է՛հ , ան կարմրեցաւ մինչեւ  
աղուր մազերուն ծայրն ու սա խօսքն ըսուա .  
— Օհ , այս , երեկոյթն աննման էր : խաղին ա-  
մէն ձեռքին՝ յետ գրութեան մը կաւելցնէի և  
ան ալ կը պատասխանէր : Մնաց որ խիզճա հան-  
գարտ էր : Իրեն ըսի թէ աշխարհի մէջ ուրիշ  
բան չունեի բայց միայն մէկ միլիոն սդերլինոց  
պանքնոթը որուն խօսքն այն ար իմացած էր :  
Բորդիան վերջնապէս իմա չէ՞ր մի : Ուստի գոր-  
ծը սկիլլեն մինչեւ վերջը պատմեցի : Ան ատեն  
խնդալէն մարեցաւ , որուն պատճառը ետքը մի-  
այն հասկցայ : Ես ալ ետքը կը պատմեմ ձեզի :  
Օրիուգը կը խնդար ու կը խնդար , այնպէս որ  
ստիպուեցայ ժամանակ առ ժամանակ կինալ : Ան-  
չանկ խնդալ տեսած չէի , տարօրինակ չէ՞ որ  
ուրիշի մը զժբախտութիւնն յաճախ զուարթու-  
թիւն կը գրդուէ : ասոր հետ մեկտեղ , ալ աւելի  
սիրեցի զայն , սա մտածումով թէ կրնայի այդ-  
ցափ զուարթ կնոջ մը պէտք ունենալ : Զմուցայ  
նաեւ ըսելու թէ տակաւին երկու տարի սպասել  
պէտք պիտի լլլար ամուսնանալու համար , մին-  
չեւ որ բոլոր պարտքերս վնարեի : Անիկա կը խն-  
դար միշտ : — Սիրելի Բորդիա , ըսի . պիտի հա-  
միշ հետս գալ այն որն երբ ներկայանամ այդ

Միւսիներուն ողահ մը վարանելէ ետք ըստաւ.  
—Եթէ իմ սերկայութիւն ու կրնայ, սիրտ տալ  
ձեզ, շատ լաւ ո բայց աղէկ կըլլո՞ւ իմ գալս.  
Կուզամ, կուզամ, պոռաց յետոյ զեղեցիկ ու  
աղիւ խանդավառութիւնմբ: Երջանիկ պիտի ըլ-  
լում խօրհելով թէ ձեր նեցուկն եմ:

—Նեցո՞ւկ, ի՞նչ կըսէք. իմ յաղթանակս  
պիտի սպահովէք: Երբ դուք, որ այնքան սիրուն  
ու այնքան գեղեցիկ եք. իմ քովս լունուիք. Կը  
կարծէք թէ երկու բարի Միւսիները սիրտ ու-  
նենան մերժելու:

—Հասկցանք: Փաղաթուշին մէկն եք դուք,  
ըստ Բորդիս երեսը վարդագոյն և անուշ մայիս  
մը գեղեցիկ աշքերուն խորը. Զեր ըստաներուն  
մէջ Ճշմարիտ խօսք չկայ, բայց նորեն պիտի ըն-  
կերանամ ձեզի, թերեւ այն ատեն պիտի հաս-  
կնաք թէ ամեն մարդ ձեր աշբով չի տեսներ:

Ալ կրնայի տարակուսիլ, ոչ: Օթէլ երթա-  
լուս, կարծես ուպերու մէջ էի և բառ մը չեի  
բաեր Հասդինկոի պատճառութիւնեւ: Յարկարամի-  
նըս մաներուս պէս ցուրտ իրականութիւնը յի-  
շեցուց ինձի, սենեկիս պերճաշուք կահաւորման  
առջև իր հիացիկ ճիշչե, ոյ: —Առլրկեան մը թա-  
զուցեք որ սբանչանամ, սիրելի բարեկայս, ը-  
ստ ինձ ո աս ի՞նչ պարանը, ի՞նչ պերճանը:  
Ահա, սիրելի Հենրիս, ձեր ճոխութեան և փար-  
թամութեան պացցոյք: Խսկ ե՞ս, կործանեցայ:

Կործանում: Այս խօսքը սարսաւո պատճառեց  
ինձի: Բալորովին արթնցայ երաշես: Ընդուն-  
դըն իմ սարերուս տակ ալ եր: Պարտքերու մէջ  
կորսուած, առանց մէկ փարտ ունենալու, ձեռ-  
քիս մէջ բռնած էի սիրուն ու ամբիծ աղջկան  
մը երջանկութիւնը կամ գժրախտութիւնը, և  
այդ աղջկան ուրիշ բան չունեի տալիք բայց ե-  
թէ առեգծուածային պաշտօն մը, զոր թերեւ  
չկրնայի ալ ստանալ. —Հենրի՛, ձեր օրական  
եկամուտներուն տեհլցուըք:

—Չէնը օրական եկամուտներն ու սա տար  
կինին խմենը ու կաղդուրիչ կերակուրն ուտենք,  
անօթի չե՞ք, նստեցե՞ք:

—Ընորհակալ եմ, անօթի չեմ: Քանի մը  
որէ ի վեր ամենեին ախորժակ շանիմ: բայց այս  
իւրիկաւ կուղեմ գինովնալ օ՞ն:

—Ես ալ ձեզի հետ եմ, պատրաստ եք, յա-  
ռաջ: Հիմա պատճութիւննիդ ըրեք նայիմ: Ես  
գաւաթները կը լիցնեմ.

—Պատճութիւնս բնել, ի՞նչ, նորէ՞ն:

—Նորէ՞ն, ի՞նչ ըսել կուզէք:

—Տէք ողորմեա: Կը հարցնիմ ձեզի թէ կ'ու-  
զէք որ անգում մ'ալ կրկնեմ պատճութիւնս:

—Բայց ե՞րբ ըրեք որ: Գինովայինչ եղաք:

—Ահ, Հենրի, հետո կիյաք: Միթէ իմ  
պատճութիւնս մանրամասնօրէն ըըրի՞ երբ դեռ-  
պանատանէն հսկ եկանք:

— Հաւատացեք որ բառ մը չիմացար:

— Բայց նայեցեք ո՞վ է եղեր զինովլ։ Դեռ  
պահատունն ի՞նչ խմեցիք։

— Ես գևապահատան մէջ տշիարհի ամենէն  
սիրուն աղջկէը գրաւեցի։

Այս իօսքերուն փրայ բարեկամս ոտք ելաւ,  
Ճեռքս սեղմեց սգինով, լսելուն համար և հաս-  
կցաւ թէ ինչո՞ւ իր պատճութենէն բռն մը ի-  
մացած չէի մեր վերադարձին ոտեն։ Յետոյ  
Նատաւ ու համբերութեամբ պատճեց։ Ամփոփու-  
մը ստ էր։ — Անզլիս եկած էր ծախելու հա-  
մար կուլտ էնտ Քըրիի էքսդէնշընսի բաժնե-  
թուղթերը, ի հաշիւ պայմանադիրներուն և ի  
փոխարէն 40,000 սդիրինի։ Էշխատած էր,  
ամէն միջոց գործադրած էր, ամէն դուռ զար-  
կած էր և, մէկ խօսքով, ունեցածը ծախսած  
էր ու չէր կրցած գտնել իր վնասած դրամա-  
տէրը։ Ամսուն վերջը ա՛լ ատենն անցած պիտի  
ըլլըր։ Կարճ ըսելով կործանած էր։ — Դու՛ք  
միայն կրնաբ փրկել զիս, բարեկամս, ըստ իրը  
եղակացութիւն։ Նոյն իսկ դուք այն միակ  
մարդն էք որ կարենակ աղատել զիս։ Պիտի ա-  
ղատէր չէ։

— Խօսեցէք թէ ի՞նչպէս։

— 40 հազար սդիրին տուեք իւշ։ Նաեւ  
Ասն քրանչիսրծ երթալու ծախքս ու վար դրէք  
բաժնեթուղթերը։ Պիտի չի մերժէք, չէ։

Իրաւ որ անձիս թեան մէջ էի. բիչ Թաց  
պիտի ըսէի. — Լոյտ, իս փարա չունիմ ու  
պարտքի մէջ կը լողամ։ Յանկարծ լուսաւոր  
գաղափար մը անցաւ մաքես, փալակի պէս ա-  
րագ։ Կզակս ձեռքս առի, գրամատէրի մը պէս  
պալ ու ինքնազմուհ։ — Պիտի փրկեմ ձեզ,  
Լոյտ, ըսի գործի մարդու մը հանդարտութեամբ։

— Ուրիմն փրկուած իմ արգեն, պոռաց  
բարեկամս։ Վասուած միշտ պաշտ զանէ ձեզ Եւ  
եթէ կրնամ։ . . .

— Թողէք որ աւարտեմ, Լոյտ, պիտի ակա-  
տիմ ձեզ, այո՛, բայց ոչ ձեր ուզած կերպով։  
Ըհտակը, արդարութիւն չէ որ այնքան տառա-  
պանքներ, այնքան վտանգներ, այնքան աշխա-  
տութիւն անլարձ մեսն։ Ես հանքային արժե-  
թուղթեր գնող մը չեմ։ լոնտնի պէս կարեռ  
կերպոնի մը մէջ կրնամ իմ զրամագլուխս դի-  
րութեամբ գործածել։ Արդեն ամէն օրուանը՝  
բաղումս աս է։ Բայց տեսէք թէ ի՞նչ պիտի ը-  
սեմ։ Ձեր հանքը մօտէն կը ճանշնայ և անոր  
արժէքը գիտեմ։ Ուստի կրնամ երաշխաւոր ըլ-  
լուլ։ Տասնըհինգ օրուան մէջ 120,000 սդիրլի-  
նի կը ծախեք այդ թուղթերը, իմ անունս առ-  
լով իբր երաշխաւորութիւն։ Մէջերնիո կը բա-  
նենք շահը։

Ահ, եթէ տեսնեիք թէ բարեկամս ինտոր ըս-  
կաւ ցատկրտել ուրախութենէն։ Յետոյ պ-

առախանեց հանդարտ ու երջանիկ. —Կարտօնէք զիս, հա՞յ, ձեր անունը տալ իրը երաշխաւորութիւն։ Ի՞նչ ուրախութիւն։ Օհ, բարեկամ, առանիներու երամի մը պէս մեր զիտուն պիտի թափին Լոնտոնի մեծահարուստները։ Երարու հետ պիտի ծեծկուին բաժնիթու դժերու տըրացակներ առնելու համար մեզմէ։ Ահանգամակիս հասոյ, այո՛, առ յաւետ հասայ Նպատակիս։ Երբէք պիտի չմունամ ձեր բարեքը, երբէք, մինչև կենացս վիրէլ։

Քանինչորս ժամ չբցած, ամբողջ Լոնտոն եռուշիզումի մէջ էր։ Ալ ուրիշ բան չունեի ընելիք, բայց եմե օդէլը կենալ ու եկող այցելուներուն ըսելո։ —Այո՛, արտօնուած է, իրը երաշխաւորութիւն իմ անունս գործածեր ըսած հանքը զիտեմ ու մարդն ալ կը ճանչնամ։ Մարդուն նկարագիրն ամէն կասկածէ վեր է, և այդ հանքը ուղղուած գինէն աւելի կարժէ։

Իրիկուներս Բորդիսյի հետ կանցնէի կեսպանտան մէջ, անակնկալ մը ընելու համար, այս հանքին գործը պահեցի իրմէ։ մեր խօսակցութիւնները միշտ մեր սիրոյն ու մեր խորհուրդներուն, ծրագիրներուն վրայ կը դառնային։ Խըրաւ, շատ սիրուն բան էր շահագրգռութիւնը զոր զեսպանուհին ու աղջիկը կուտային մեր պիտիկ գործին, և այն հիանալի գարձուածքները զոր կը դառնէն մեր գլուխ—զլիսի տե-

սոկցութիւնները չընդմիջելու և գործը դասպանին շիմացնելու։ Համար։

Ե՛ս վիրապէս ամիսը լրացաւ, Վընտըն ենաքառունդի Պէնքի մէջ մէկ միլիոն տղար ունեի։ Հասցինսկու ալ նմանուպէս։

Հագուած շրուած, ելայ Քօրդլէնդ թլէյս գոցի, և տունին երևայթէն հասկայ թէն երկու Միւսինները եկած էին։ Ծուտով գեսպանատուն գործայ, սիրեցեալ գանձս առնելու համար։

Ճամբան, պաշտօնիս խօսքն ըսկինք։ —Սիրելի բարեկամուհին, ըսի, իրաւ որ ոճիր մըն է երեք համար սգերինի թաշտիւս մէկ բէնապակուցնելո, քանի առ ձեզի պէս աղօր ընկերուհի մը ունիմ։ Մի վախենք, և աստահութիւն ունեցէք իմ վրաս։ Ամէն բան աղեկ պիտի վերջանայ։ կը տեսնէր —

Բայց որովհետեւ տաւնին մատեցանք, հարկեղաւ նորէն սիրտ տալ անոր։ Միշտ կըսէր ինծի։ —Կաղաշիմ, աւելի չուզենք։ Կրնայ Ըլլուլ որ ամեններն ձեռքերնիս բան մը չանցնի, ան ատեն ի՞նչ պիտի ըլլանք, ի՞նչ պիտի ընենք ապրուստիս շահէլու համար —

Կոյն պերճաշուք սպասաւորն էր ու այս անգամ ալ ներս տարաւմել։ Եւկու յարդելի Միւսինները նստած էին. բիշ մը լորմացան կարծեսայս գեղանի աղջկան հետ առնելով զիս։

—Անպարկեշտ բան չի կայ միւսիններ, ըսի։

Օրիորդն իմ նշանածուե, և ապագայ ընկե-  
րու հիս :

Բորդիան ներկայացուցի իւենց և զիրենք ալ  
բորդիայի : Անուննին տուած առնենս զարմացան,  
խօրհելով թէ Տարեցոյի մը մէջէն դասած ըլ-  
լալու եմ . բարեսիրաբար նստեցուցին մեզ,  
կրցածնին ընելով Բորդիայի հանգստաթեառ  
համար :

Այս ատեն ըսի իրենց . — Միւսիւնե՛ր, պատ-  
րաստ եմ հաշիւս տալու :

— Խիստ լւա, պատասխանեց ձենդլմենը . Ը-  
սել է հիմա ես ու Արել եղբայրս պիտի կրնանք  
որոշել թէ մենէ ո՞վ շահեցաւ գրաւը : Եթէ ես  
եմ, ուզած պաշտօննիդ պիտի տամ : Մէկ մի-  
լիոն սղերլինոց պանքնօդը բովիրնիդ է :

— Աւասիկ, Միւսիւ . ըսի և պանքնօդն ի-  
րեն տուի : — Շահեցայ, պոռաց, ընտանեքար  
զտրներով Արելի ուսին : Է՛, եղբայր, ի՞նչ կըսես:

— Ի՞նչ ըսեմ, 20,000 սղերլինի գրաւս կրո-  
սնցուցի : Երբեք չեկ կարծեր :

— Դեռ ըսելիք ուշիմ ձեզի, Միւսիւներ, կը  
հաճիք ուրիշ ունկնդրութիւն մըն ալ շնորհել  
ինձ, որպէս զի մէկ ամսւան մէջ ըրածներս  
պատմեմ ձեզ : Կարժե մտիկ ընել . հիմակու հի-  
մա հաճեցեք սա ծրարս բնենել :

— Աս ինչ է . կարելի՞ բան չե . բան հազար  
սղերլինի գանքայի աւանդագիր մը, ասիկա

ձե՞րն է :

— Հապա որի՞նը պիտի ըլլար . ես ինքո շա-  
հած եմ զայն 30 օրուան մէջ, շնորհիւ այն  
փրկուատուութեան զոր համեցութ ընել ինծի :  
Պանքնօդիս վրան ուզելով, շատ բաներ զնեցի,  
ծախեցի և շահներ ըրի :

— Զարմանալին, անհաւատալին :

— Ճշմարտութիւնն ա՛ս է, հաւատացէ՛ք :

Զարմանալու կարգն հիմա Բորդիային հկաւ :

— Հենրիի, այս ստակները բու՞կդ են . ուրեմն  
խարեցի՞ր զիս :

— Է՛ս, այս, սիրեցիալ բարեկամու հիս, բայց  
պիտի հաճիք ներել ինձ :

— Այդքան ապահով մի ըլլար, պատասխա-  
նեց յօնքը սանկ բիզ: մը պասելով, ինչո՞ւ ինձ-  
մէ պահեցիր :

— Օ՛չ, հաճեցէք ներել . Բորդիա, կաղա-  
չեմ, պարզ կատակ մ եր : Եկեք երթանք, ե-  
թէ կուզէք :

— Դեռ ո՛չ, ըստւ ձենդլմենը և կեցուց զիս .  
կարծեմ թէ պաշտօն մը պիտի տայի ձեզ :

— Հազար զորհակալութիւն, Միւսիւ : Ան-  
հունապէս երախտապարտ եմ ձեզ : Պաշտօնի  
պէտք շունիմ ալլես :

— Բայց տրամադրելի պաշտօններուս ամենէն  
աղուրը պիտի տամ ձեզի :

— Նորեն ի սրտէ շնորհակալ եմ ատար հա-

մար ալ Բայց պէտք չունիմ, Տեսրը, ալ պէտք  
չունիմ:

—ՀԵՆՐԻՇ, կը շփոթեցնէք զիս, Պէտք եղա-  
ծին շափ շնորհակալ չէք բԱՄԱՐ այնքան բարի,  
այնքան սիրուն այս Միւսիւներուն ևս կրնա՞մ  
ձեր տեղը շնորհակալումիւն յատնել:

—Տարակոյս չի կայ, սիրելի Բորդիսա . ան-  
շուշա զուք տեկի լաւ պիտի բնելք :

Բորդիս Միւսիւն բով կազեց, անոր ծուն-  
կերուն վրայ նոտաւ, և թեք զգին նետելով ող-  
շագօռքից զայն: Ան ստեն երկու Միւսիւներն  
սկսան բահ բահ խնդուլ:

Կրնաք երեակայել թե շոււարած, գրեթե բա-  
րացած մացեր եի: Բայց Բորդիս պոռաց: —  
Հայրիկ, ըստու թե իրեն յարմար պաշտօն մը  
չունիք: Ասիկա ծանր եկաւ ինձի:

—Բայց սիրեցեալ բարեկամահիս, Միւսիւն  
ձեր հայրիկն ե եղեր:

—Այո՛, այո, իմ սիրեցեալ հայրիկս է: Հի-  
մա կը հասկնաք, չե՛, ինդայներուս պատճառը,  
երբ, առանց ընտանիքս ճանշնալու, գեսպանա-  
տան մէջ ինձ պատմեցիք թե ի՞նչ շփոթու-  
թիւներ ու մտահոգութիւններ պատճառած եր  
ձեզ սիրեցեալ հայրիկիս և Յուել հօրեղբօրս  
գրութ:

Գողծը կարծ կապելով, ուզդակի նպատակիս  
դիմեցի: —Եցա սիրեցեալ տե՛ր, թոյլ տուեք ոք

խուրս շարունակեմ, բոի: Դուք ձեր տրամա-  
դրութեան տակ ունիք պաշտօն մը, զօր պա-  
տիւ ունիմ խնդրելու:

—Ը ե՛ք, ի՞նչ պաշտօն:

—Փեսայի պաշտօնը:

—Շատ լաւ, բայց եթէ տսկաւին այդպիսի  
պաշտօն մը չէք կատարած, կրնաք պէտք եղած  
տեղեկութիւնները տալ ձեր մասին, և այս կերա  
զո՞կ . . .

—Օ՛հ կ'աղաշեմ, առանց պայմանի ընդու-  
նեցեք զիս: 30 կամ 40 տարի փորձեցէք զիս  
և եթէ . . .

—Աղե՛կ, աղեկ, ալ ուրիշ բան չենք ուղեր  
ձեւէ: Առե՛ք մեր աղջիկն ու երջանիկ եղիք :

Թէ ի՞նչ զգացի այս պահուսւ, չեմ կրնար  
բառերով բացատրել ձեզ: Դուք ինքնին երեա-  
կայիցեք: Ես երբ Լոնտոնցիք, երկու երեք օր  
եաք, մանրամասնորար իմացան միամսեայ ոգի-  
սկանիս պատմութիւնը, որ ահա վերջոցած էք,  
կրնաք երեակայելթէ որբա՛ն խօսեցան մեր վրայ:

Բորդիայի հայրն Անգլիոյ Պանքային զրկեց  
բարերար ու երջանիաբեր պանքուոր, զոր պան-  
քան չնչեց, բանի որ այլ ես բանի մը չեր ծա-  
ռուայեր, փախարէնը մեր հաշուընթացին անցած  
ՈԱՊՄՎ:

Անգլիոյ պանքան նոյն պանգնոդի թուղթն  
իբր նուեր տուաւ Բորդիայի հայրիկին, որ մեր

ամուսնութեան օրը մեղ բնծայեց։ Հնկե ի վեր  
մեր տան ամէնէն նուիրափան տնիլը կախուած է  
ան, շրջանակի մէջ առնուած։ Այդ պանքնոգին  
կը պարտիմ բորդիաս։ Եթէ ան չլլոր, գու-  
զունտուն պիտի չերթայի և հաւանաբար եր-  
րէք պիտի շհանդիպէի անօր։ Այդ պանքնողը  
ցոյց տալով կըսէի միշտ։ —Այո՛, ահա մէկ մի-  
լիոն սդերլիննոց պանքնոդո, որ մէկ անդամ  
ծառայեց ինձի, եւ ան ալ, տասն անդամ ա-  
ւելի արժող գնում մը կատարելու համար։


### ԱԵՐՁ

Որոշած ենք ամէն 15 օրը անգամ մը  
տարակել ասոր պէս հետարբեցաւմ վէպիկ  
կամ 40 էջերէ բաղկացած ։ յիսլոյս ԵՄ  
պէտք եղած քաջայիրութիւնը պիտի զտնե՛  
թերցող հասարակութեան կողմէ։

---

գին 40 սանդիմ կամ 60 փարա ո՞յ

-- Օ --



中華書局

№636